ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԻՍՏԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

2004 թվականի սեպտեմբերի 20-22-ը Բրյուսելում կայացավ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ընդլայնված նիստը: Հանդիպումը, որին մասնակցում էին ԵԵԿ անդամ Եկեղեցիների «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբերի ավելի քան երեք տասնյակ ներկայացուցիչներ, տեղի ունեցավ Բրյուսելի Ամազոն մշակութային կենտրոնի նիստերի դահլիճում:

Հայ Առաքելական Եկեղեցին սույն ժողովին ներկայացնում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

Հանդիպումը մի առիթ էր, որ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբերի քարտուղարները միմյանց հետ փոխանակեն իրենց ունեցած ըմբռնումները և փորձառությունը Եկեղեցուն և հասարակական կյանքին առնչվող այլևայլ հարցերի վերաբերյալ, ստեղծեն համագործակցության շղթա, քննարկեն Բրյուսելում գտնվող Եվրոպական Էկումենիկ կառույցներում տեղի ունեցող իրադարձությունները, իրենց «տեղային առաջադրանքները» կապեն ընդհանուր «Եվրոպական առաջադրանքներին» և գտնեն գործընկերներ՝ համընդհանուր խնդիրները լուծելու և համատեղ ծրագրեր իրականացնելու համար:

Ժողովի աշխատանքները տևեց երեք օր: Հանդիպումների ընթացքում, բացի պաշտոնական ներկայացուցիչների զեկույցներից ու առանձին քննարկումներից, ընթերցվեցին դասախոսություններ և տեղի ունեցան հանդիպումներ Բրյուսելում գործող Էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչների և Եվրոմիության խորհրդարանի ներկայացուցիչների հետ: Քննարկումների ընթացքում շոշափվում էին հիմնական երեք հարցեր՝ «Եվրոմիության ընդլայնումը», ուր խնդիրը առարկան Թուրքիայի անդամակցությունն էր, ապա «Եվրոմիության սահմանադրությունը»՝ 52–րդ հոդվածի առնչությամբ, ինչպես նաև «Սոցիալական հետաքրքրության ծառայությունների» վերաբերյալ Եվրոմիության օրենսդրությունը:

Ժողովի ընթացքում նաև խոսվեց գաղթականների մասին, հասարակության մեջ նրանց ինտեգրման, աշխատանքով ապահովման, կրթության, իրենց ազգային արժեքների, լեզվի, մշակույթի, կրոնի պահպանման հարցերի շուրջ, որը բոլորի կողմից ընդունվեց դրականորեն: Անդրադարձ եղավ նաև գլոբալիզացիային, վերջինիս դրական և բացասական կողմերին:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ